

ԽԱՄԻԲԱԿ

ՅԵՐԱՅԵՄԵԱՆ
ՅՈՒՐԴԱՆՈՒԹՅԱՆ

ԳԻՆԵԷ 10 Կ. ԳԱԽԱՌՆԵՐՈՒՄ 12 Կ.

1911 Շաբաթ, Յունևարի 1 - րմ.

ԹԻՖԼԻՍ. № 1.



ԵՕ.Մ. ԿԻՆԴ.

Ա Հ Ա Չ Ե Ղ Ն Ո Ր - Տ Ա Ր Ի .



Բ Ա Ց Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

1911 թ.

VI

Տարի

ԽԱՏԱԲԱԼԱ

VI

Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտոնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլփիչ, անկեղծ և կեղծա-
ւոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Անհրամբես քեր բոլոր բնօտերիցների համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթը ծիծաղեցնում է, շաբաթըն էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:

Հասցէն՝ Тифлиς Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“
Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ



«ԽԱՔԱԲԱԼԱՅԻ»

Բ Ա Ց Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Տարեկան	ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են
ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս
վճարով, երկուսին միասին փոխանակ՝

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 ռ.
Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրել
ցանկացողին 75% զեղջ
Զրի կարդացողներին պէտք է նկարենք
Գ Լ Ի Ի Վ Ա Ղ Ի



Զ Ն Ո Ր Յ Ա Ի Ո Ր Զ Ե Զ Ն Ո Ր Տ Ա Ր Ի 1911 թ.

Ն Ի Է Ր

6-ամեայ „Խարաղապ“-ին

Հայոց աշխարհի մում հորիզոնում...
Գժնեա ամպերի վիթխարի սրտում,
Յուսոյ կենդանի մի աստղ է փայլում...
Վատ արշալոյսի շողերով ծփում,
Միում անընդհատ, շողում, պղպղում
Վե՛ր արտասակի նամբան է հարթում...

Խաւար սուգերի... վիթխարի սրտում
Նա որպէս նսկայ, գօրեղ, անապատում,
Արդար գայլոյթի գերագոյն թափով
Հեղուծան վսեմ պայքար է մղում.
Պայքար է մղում, հետում, մոնչում
Հայ ցաւոտ կեանքի, վերբերը բանում...

Կեղծ գործիչների դիմակը հանում
Հայ ժողովրդին միշտ ծիծաղացնում:

Գառն

ԵՐԳԻՈՒՄ ԵՄ

Շմերլինգի վրձինով,
Ղ. Մարգարի կլայելով,
Զէրքէգեանի գրեղով,
Նաղուբեանի մատիտով:


Քալանթարի առաջնորդով,
Համբարձումի պայքարով,
Աղայեանի ւ-ով,
Մախասեանի վ-ով:

«Մշակ»-ի փայլանով,
«Հովիտ»-ի հովերով,
«Լում ա յ»-ի փողերով (քանքարով),
«Հորիզոն»-ի հորիզոնով:

«Արարատ»-ի անշարժութեամբ,
«Խաթաբալա»-ի զօրութեամբ,
«Սուրհանդակ»-ի լուծիւսով...

«Գիւղանտես»-ի հարց-պատասխանով,
Տիգրանի «Ճարագ»-ով,
«Աղբիւր»-ի ակնով,

Աագ Մասի կատարով,
Արագածի ոտներով,
Անշարժ կոնսիստորիաներով,
Մեռած գործակալներով:




Նոր սերնդի հաստով,
Չեղամ-եղամ դուսնանքով.

«Գուտտեմբերգ»-ի Էլրորադայով,
«Կենտրոնական»-ի աստղ փառացով,
«Կովկասեան...»-ի գերեզմանով,
Թագա «Գիր»-ի արնով,
Թառայեանի լուսնակով,
Ելրգ «Քեուկ»-ի աստղերով,
«Դասպար»-ի քաղքի հանարով,
Որ Նոր-Տարին
Այսօր

Է:

Տ.—Ս.



**ԳԱՍՊԱՐ ԾԱՌԱՅ ՀԱՌԻՑ ԱՍԿԻ ԵՒ ԱՆ-
ՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՒՔՆ ԽԱՔԱՔԱՍԱ ԲՈՒՌՆԻ
ՄԵՆՁ ՈՒ ՊՍՏԻԿ ՍԵՒՐԻՍ ԳՈՐԾԻՉՆԻՐԻ,
ԴԱՐԴՈՒԲԱԼԱ ԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ՍՈՒՑ ՅՈՒ-
ՑԻԱԼՆԻՐԻ ՈՒ ԸՆԴՀԱՆՐԱՅԿԱՆ ՉԱՂՈՒ-
ՄԱՐ ՀԱՄԱՅՆ ԽՈՒՂԻԳԱՆԱՄԻՑ ՄԱՐ-
ԴՈՒԿՆԵՐԻ, ՏԵՐ ՈՒ ՏՆՕՐԷՆ ՄԻՐ ՏՈՒՆ
ՈՒ ՏԻՂԻ, ՄՕԴԻԿ ԲԱՐԵԿԱՄ ԼԱՒ ՄԱՐ-
ԴԵՐԻ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ Ի ՀԱՐԿԵ
ՊԻՑ ԼԻՆԻ**

Լ Ո Ւ Ս Ա Ճ Ա Ճ Ա Ն Ձ Յ Ա Ի Ո Ւ Ր Ս

Ն Ո Ր Տ Ա Ր Ի Ո Յ

ՏԱՅ ՉԱՅՍ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ—ԸՆԴՀԱ-
ՆՈՒՐ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Էսօր Նուր-Տարի է ու թէկի միգ
համա նուր է մաշ ձիգ համա էլ սի-
րելիներ, նուր էլ լի ու նուր կուլի. հա-
մա տեհէք, վուր՝ աշխրքիս վրէն պէս-
պէս փորձութիներ, թայրթայր փա-
թերակներ, ճրիլ-մրիլ խասիաթով մար-
թիք ու գուրձիչներ կան, ու իս կու-
լանդրիմ Ամենակալեմէն, վուր դուք
էդ բուլուր դարգուբալէքիցը ազատելք
ու անշառ մնանք մինչկի կատարածն
աշխարքի, ու էս օրն էլ կուլի էն շա-
խը՝ ի՞նչ վուր մինք կուլինք—միք քե-
փը կուլի:

Մաշ:

Հիմա ինձ ասէք թէ՛ ի՞նչ է Նուր-
Տարին:

Նուր-Տարին՝ Նուր-Տարի է, հին-տա-
րին էլ հին տարի կուլի:

Ու թէկի միք գուրձիչները էլի հին
տարւայ մնացած անպատուի վեքսիլիք
կուլին, Նուր-Տարին էլ էնէնց կեհայ,
վունց վուր հինը գնաց: Միք մարթի-
քը՝ կէս մարթիքը, չէթւիրանիրը... էլի
էն գեկին կիկօն ին ու էլի էն դալմա-
զալչի ստախօսնիրը—աբա էստի Նուր-
Տարին ի՞նչ կօտկէ:

Համա մէնակ էա խօ չէ,—գուրձիչ-
ներ կան միք միջ, վուր մէ շահի աժին,
գուրձիչնիր էլ կան, որ մէ գրօշի տօլ
խիլք էլ չունին—սրան ի՞նչ կօտիք:

Ասած է՝

Համ մ'թիուլ ին, համ օս ին,
Տոտուց տոտուց կու խօսին.
Սարի էժ ին, իղ չունին
Մէ քոռ գրօշի խիլք չունին:

Ու էս խիլքի էժան ժուգը, էսղգամ
դուրթ ասողներու «ժամանակին», վունց
վուր ասում էր Պառաւ-Յօգանը Նոյի
կիղորանից (ասպանից) դուս գալու
վուխարը...

Ի՞նչ վուր է.

Իուք գիղիք իմ աղիգ ու մազիգ
խասիաթը ու էն էլ թէ իս վունց իմ
սիրում ձիգ, ու էդ վուր էղպէս է՞,
մաշ կուլի՞ վուր էս օրւան օրը, թէ
սիրեկան ասկիս, թէ թշնամի—բարեգ-
մներիս, թէ միք գուրձիչ-մուրձիչնե-
րուն, թէ անգուրձ-աննամուսներուն,
թէ լպտած մտափոխներուն, թէ մա-
վախ լրփերուն, թէ անձաշակ գաղէ-
թաճիներուն, թէ լաւ ուշունց տուղ
ժուրնայչիներուն, թէ անճօքի խմբա-
գրներուն, թէ սեւաճօքի սասանանե-
րուն, թէ անհաւատ վարթապիտներ-
ուն, թէ տիրացու ցոցիախներուն, թէ
միք Բարեգուրձական նընգիրութիւննե-
րուն ու թէ Ղուլ-տուր-ական նընգիրնե-
րուն, թէ անտէր միք տէրաէրներուն,
թէ տէրաէրով լիք միք շօլէքուն, թէ
կոնցլիստորներուն, թէ սինօթ-միսօ-
թականիրուն, թէ թէներուն ու թէ
անթէներուն, որունցով լիքն է միք
ասկը, Աթամ նահապետից կցած մինչ-
կի միք օրերը ու էստուր էղնին էլ
մինչկի աշխրքիս վիրջը:

Էտու համար էլ էս Նուր-Տարւայ օ-
րը ամենքին ջէր ջէրօքիթ բախում
ինք բոլուր ձիք միղքերը՝ կերած փու-
ղիրը, ասած ստիրը, տւած թանխէքը, ու
իմ բանցը շնորհակալութիւնը այդնում
իմ ձիգ. ուն, (ասէք ուն ձեներդ
կու հալի):

Էդով՝ տալիս իմ մինդախիր մէջքի-
ցը կախելու համա՝ միք պատուական
գոլովին:

Ալեխանդրէ Խաթիսովին

Ան բուղկից շինած, կլէկած ու գուփ-
չատ ակոէքսիրով, կողքին մկներ ու
խօլբերի բացիլներով «աղամանդադարդ».
Խիստ լաւ օքմին է, Աստուր կինք տայ.
ու շնորք էլ շատ ունէ. թամամ կաթիկո-
սացու էլ է:

Կասաեղիկե Խաթիսովին

Մէ փութանոց խոնարհութիւնի նշան
վուր, թէ վուր միք կաթիկոսները ասին
մաժուր սե է, նա էլ շասի թէ սպի-
տակ է:

Սա մինձ փառքի էլ արժան է, հա-
մա էդ իժուս:

Գիգա Խաթիսովին

Տամք վասն խաղալոյ «գշիկա իւ
ըզընիլին» առաջի ստեպկնի. և պատ-
ւիբեմք՝ ակոշկէք զանազան հաստատու-
թենց չկտորակել:

Իրիք ախպէրներուն վուր է՝ նշան-
նիրը տալիս ինք, հալլախիլք չէլ
դրանց վրայ կուլի էլի:
Աղաթն էլ էտինց էլի:

Ալեխանդրէ Խաթիսովին

«Գրիլչ» մի, վորոյ վրէն գրւած լինի՝
Տօ հէր օխնած հէրիք է,
Փասափուսադ վիբադէ:

Մաբարցում Առաքիլովին

«Զպաղարոմնա» ասացեալ վկայու-
թիւնն—բայց վոսգ զնալու որտեղ ճարպ
կայ՝

Էջմիածնեմէն Էրուսաղէմ, էնդանց
Հնդաստան ու էնդանց էլ Պօլիս ու միք
պեալած Թիփլիզ քաղաք, ինչքան ախ-
մախնիր կան, վուր կարող ին կաթիլ-
կոս դառնայ—սրանց մասին խաբարներ
գրելու, չունքի սրանց հարգաուր է բէկ
լամներ:

Միւր Աւանիկա Մաքիսովին

Ժիտուն, վրէն փորագրւած՝
«Էրնէկ քիզ վուր դուսը չիս
էղու համա կուսնաս լիս»:

Օհանէն Թումանեանցովին

Տալիս ենք էս թաուր կոնդակ
Սիրեցեալ վուրթի Օխանէս!
Իուն արժանի իս մինձ մինձ պատու-
ների, համա, չունքի պատուիգ արժէքը չը-
գիղիս ու Պառնասի բարձունքից դիվիր.
Իս նընգնում քիզ ու քիզ. էդ լաւ չիս
անում:

Մաշ մտիք ցեխի մէջ, մինչկի քեփդ
կուլէ: Համա տես՝ վուր դժար կուլի
լանալդ, ու էլ վունց մի քիսաչի չի
կանայ քիզ թամզացնի. ամէն:

Առաքիլ Գաբալիսովին

Սրան տալիս ինք հաւատափսխութեան
մի հետտի մինձ ժեստ, վուրի վրէն գրած
կուլի՝

«Հաստը քո կերուցին գրեգ»:

Ղազարէ Աղապովին

Սրան նշան հարկաւոր չէ, աննշան էլ ի-
րեում է, տամք զիր օխնութեան, վուրդի
գրած կուլի—

—Չունքի հաստարիմ իս մնացի
էն շախեմէն էս շախը ու խապիաթդ չիս
փոխի. էսօր էս չիս ասի, էքոց էն, ու
չունքի հինիդ, համա չորթեր շատ իս
զցի, մաշ շատ ապրիս, մինչկի մախաթի
սարը մէ կակլի տօլ տեանիս ու վանքն
էլ շէմիչկա գիղենաս:

Տիգրան Կազարովին

Տալիս ինք մի ձի և կամ ձիանման փոք-
րիկ կինթանի Լիսաբոն գնալու համա—
էդ կինթանու կուզու վրէն ոսկէ վարազով
գրած կուլի.

«Աւաղ փառացս անցաւորի»:

Մուսնիկ Աղապովին

Բախում ինք մի փութ հին ան-
պէտք գրոշնիր, որ մինձ պատերիս դան-
ձանակի մէջ գցում ին խալիլը ու տէր-
տէրները չին էլ բաժնում:

Պատերիմք՝ սրանց պահել թանգա-
րանում, վասն փառքի ասկի մերոյ:




ԱԶԳԻ ՓԱՌԲԸ — ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ

Այստեղ կը գտնէք դուք մեր բոլոր մեծ մարդոց, կեանքում ոչ ոք, համարեա թէ ոչ ոք չէ մնացել:


Օ Տ Ա Ր Ի Ի Մ Օ Ր

Օ Տ Ա Ր Ի Ի Մ Օ Ր



Նա—Ասիք թէ այդ ընկերուհիդ ում հետ է ամուսնացած:
Նե—Նա դեռ չէ ամուսնացած:
Նա—Այդ դէպքում ասիք նաև հետ չէ ամուսնացած, կամ,
դեռ չէ պարած:

—Սիրելիս, նայի՛ր, նայի՛ր մեր զաւակը կեմիկանից
հագնէ և ուզում պանաւ:
—Որտեղից իմացար:
—Ձեռ տեսնում պեղումներով է զբաղւում:



Ծիրանգաղիք

Չունքի էս մարթը խիստ է մինձացի իրան իրան, ինչ վուր գագրանիցա է գընացի ու էտեհցութիւնով իր պստկութիւնն էլ չի տեհնձձ, էտու համա էլ շնորհում ինք սրան օրելեանի խաթրու արրուծենի արտողու:

Ա. Ե. Ս. Արամառովից

Սրան կուտանք խառ փիլոն վրէն գըցելու, ինչ ժամ վուր ներս մտնի, լաւ աղօթք անի, իժում էլ կոնդակ վուրդի գըլած կուլի՝

Էստի տիտի—էնդի տիտի

Տօ հէր օխնած, մէքսիդ նստի:

Է. Բ. Ե. Կ. Բ. Կ. Բ. Կ. Բ.

Վասն զոչաղութեան 'ի ժամ հոգեհանգստեան և օրինակիլի կարգապահութեան պատւիրիմք զբարեշէն ընդ ըմբոստ երեցփոխանին վանքի՝ զպարուն Յովսէփ Յովսէփեանցի հիգ. վասն զի, և չունքի չի կարելի, վուր Քրիստոսի աշակերտը խոով լինի ու էն էլ երեցփոխաների ու հոգաբարձուհերի հիտ Ամէն:

(Էլի կուլի)

Վասպար Կալասուզով
Խարաբալա Ամենայն հայոց

Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Հասա կրկին թոհըրդ մեզ,
Կիշերների սև շղճիկ,
Ասա՛, շատով, ի՞նչ լուր ունես, —
Մանչ ես բերում, թէ՛ — աղջիկ:

Ի՞նչ ես տեսել այն աշխարհում, —
Յուրտ ձման շո՞ւնչ, նոր զարո՞ւն,
Բարեւել չե՞ս մ'եր նոր կեանքին, —
Ամպեր չկա՞ն երկնքին:

Ո՞վ է իշխում այնտեղ, հօր,
Նոր առատ, միտքը նոր.
Մեր որդիներն ի՞նչ են ասում,
Գովո՞ւմ են մեզ, բամբաստ՞ում:

Ի՞նչ ես բերում մ'եր աշխարհին՝
Սև թեւերիդ շարակած,
Երջանկութի՞ւն, մ'իտք, ցաւեր՝ հի՞ն,
Անվրդով կեանք, — ճի՛շ ու լա՛ց:

Շո՞ւտ, մրմնջա՞ — ի՞նչ ես լոնե՛ —
Լաւ բան չունես, հաստա, —
Թէ՛ ձմեռն է այնտեղ տիրել,
Արդեօք զարուն պիտի զա՞յ:

Պէտք է խնդա՞նք քո թեւերում, —
Կիրկ ու զգանք ես բերում.
Թէ՛ պէտք է լանք, անվերջ սգանք,
Փնտռենք արցունք, անարգանք:

Պիտի ծագի նոր արշարոյս, —
Թմրած հոգու քաղցր յոյս,

Թէ՛ — հաւաչանք՝ անվերջ գիշեր, —
Դառնացողի սև յուշեր:

Դէ՛՛ն, ժպտա՛ մեզ, գալիք բարի,
Նորուած կեանք, Նոր տարի.
Բայց, հնի պէս, թէ ցաւ բերես, —
Լաւ է՛ չգաս, — խաւարես:

Ա. Բ. Կ. Բ.



Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն

«Ծաթարալա»-ի խմբագրական կազմը եւ կենդրոնական բիւրօն որոշեց ստալիկայ 1911 թւի համար իր նետտորդներին շնորհել նետեւալը՝

§ 1. «Ծաթարալա»-ի այն բոլոր բաժանորդները, որոնք սկզբից մինչ ցայսօր մնացել են ամուր իրենց դատանած սկզբունքներին և մեր կուսակցութեան՝ ոչ մտքով, ոչ գործով, և ոչ փորձով և կամ այլ ինչով չեն դաւանանել — ու հաստատ մնացել են մեր շարքերի մէջ — միշտ ամուր պահելով կուսակցութեան «դէմ ու դէմ» — «եւրես առ երես» ասող դրոշմը, այդ բոլորին յայտնել մեր անհուն շնորհակալութիւնը:

Թող կեցցեն նրանք:

§ 2. Այն բոլոր մեր ընթերցողները, որոնք անխափան կարգացել են մեր թերթը եւ ծիծաղելու ժամանակ ծիծաղել վշտանալու ժամանակ էլ վշտացել են՝ — և աջարջութեամբ հետևել են թերթին — հայ կեանքի սև ու սպիտակ օրերին, յայտնում ենք և շնորհակալութիւն և մի բան էլ աւել:

Թող կեցցեն նրանք:

§ 3. Այն բոլոր մեր բաժանորդները, որոնք սկզբի օրերից մինչ ցայսօր իրենց պարտքը լրջութեամբ կատարել են և՛ անխաբան բաժանորդագրելով մեզ թիւ ու թիկունք են եղել մեր սուրբ գործը առաջ տանելուն, յայտնում ենք և՛ շնորհակալութիւն և՛ երախտագիտութիւն և ցանկանում ենք ամենայն յաջողութիւն:

Թող կեցցեն նրանք:

§ 4. Մեր բոլոր գործակալները, որոնք ակուրատ են եղել թէ անակուրատ, բայց և այնպէս գործը սիրելով — ազգը վտանգից ազատել են մեր թերթը տարածելով, երիցս արժանի են շնորհակալութեան և «Ծաթարալա»-ի օրհնութեան:

Թող օրհնեն նրանք:

Ո Ր Ո Ծ Ե Լ Ե Ն Ք

Մեր բոլոր կուսակիցներին, ընթերցողներին, բաժանորդներին և գործակալներին պարզեատրել այսպէս —

Առաջին կատարողի մարդկեցանց տալիս ենք 100,000:

Երկրորդ կատարողի մարդկեցանց 750,000:

Երրորդ կատարողի մարդկեցանց յիշածնեւրին 500,000:

Եւ չորրորդում նշանակւածների 250,000:

Իրանք բոլորը կարող են նշանակւած օրը գալ և ստանալ իրենց հասանելիքները:

Խմբագրական Ա. Ե. Ս. Ա. Բ. Կ. Բ.

Պ Ա Տ Ի Ի Բ

Էջմիածնի անվարան միարանութեան

Գուք Քրիստոսի աշակերտներ!
Ժամանակը և էջմիածնեան դէպքերը ցոյց են տալիս, որ դուք մեր ժուրնալիստ հրատարակախօսներից աւելի բխար խայտառակութիւն և այլ գործեր էք կատարում յօգուտ ազգի տնաքանդութեան և էջմիածնի վերացման...

Սա որչափ էլ ցաւալի է, բայց և իրողութիւն է:

Հիմա ինչ կանէք, ձեզ պատժենք թէ չէ: Ահա այս օրը, երբ ամենքը գողինաղ ուտելով են զբաղւած, դուք միմեանց մտեր կրծելով էք զբաղւում. դա հաւատացէք, որ զգուշի է եթէ ոչ ամօթ:

Չուզենալով մեր այսօրւայ ուրախ տրամադրութիւնը փոխել, յայտարարում ենք ձեզ, որ եթէ դուք ձեզ լաւ պահէք, ձեզանից ամենալաւին մենք կաթմիլիկոս կըջուկենք:

Հաստատ և անդրժելի խօսք ենք ասում ձեզ. կնքած մեր կուսակցութեան մեծափառ և ափսէի չափ սինիի ուսան կնիքով:

Ուստի պատիրեմք ձեզ լաւ պահել, և աշխատել նոյնպէս, սիրով ու օրինակիլի լինել և ընկերների հետ հաշտութեամբ ապրել, մինչև այնչափ, որ իւրաքանչիւրը ձեզանից առանձին-առանձին կաթողիկոսական աստիճանին արժանի համարէք:

Թէև այս էլ գիտենք, որ դուք՝ իւրաքանչիւրը այժմ էլ նոյն կարծիքի էք, սակայն չենք կարող մենք բոլորիդ վրայ յոյս դնել:

Ասուած օրհնեցէ ձեզ եթէ մեր խօսքը կատարելու լինէք:

Իսկապէս այս էլ ամօթ է, որ մենք ենք ձեզ քրիստոսաւանդ սիրոյ հրաւէր կարգում, բայց ինչ տրած, ինչպէս մեր կուսակցութիւնները իրանց ծրագրները մոռացել են, նոյնպէս էլ դուք աւետարանի պատւերները:

Ամենայն հայոց խաթարալա՛
Գասպար Կալասուզովի փոխարէն

ստորագրել է՝ Կալասուզով Գասպարով.
1911 թւի, յունւարի 1-ին
առաւօտեան ձէքին:

Ա Մ Ն Ի Ս Տ Ի Ա

Չուտ կուսակցական

1. Նոր-Տարի օրը ներում ենք այն բոլոր յանցաւորներին, որոնք մեր դէմ են եղել և արգելք են հանդիսացել մեր թերթի, ուստի և մեր ասածների տարածման հայ ժողովրդեան մէջ:

2. Բոլոր այն հակառակորդները, որոնք խօսքով կամ գրչով և կամ բռուկացքով ու դազանակով, վիրաւորել են մեզ, մեր գործակալներին և ընթերցողներին, և որոնք արժանի են դժոխքի մէջ քսան և հինգ տարով ապրելուն—մենք ներում ենք. թող նրանք ապրեն իրենց տներում, սակայն այս անգամ առանց ուլիցի:

3. Այն բոլոր բաժանորդները, գործակալները, որոնք մեզ փող են պարտ և չեն տալիս ու դրա համար արժանի են դժոխքում յիսուն և հինգ տարի ու վաթսուներեք օր հալած արճիճ (կապար, բայց ոչ կոպար) խմելուն և եոցրած կպրի կարասի մէջ լողալուն. ներում ենք յանցանքները և պատկընդում ենք, որ գոնէ պարտքերը վճարեն:

4. Այն բոլոր վատ մարդիք, որոնք գաղտնի և ափաշկարայ կերել են ազգային փողեր— և խմբագրութիւններին մասն չեն տւել՝ նզովելով նզովին, բայց ոչ պատժելն—համաձայն մեր այս ներման՝ 55 յօդաձի 487 պարբ. 5876 կէտի: Ամէն:

«Խարսրայա»

ԽԵՉՅԻ ՆՈՐ-ՏԱՐԻՆ

Նոր տարուց երեք օր առաջ ուստայ խէ- շանը տուն գալով, բերում է 2 գր. միզը, մի շիշ գինի և դնելով սեղանի վրայ, ա- սում է կնոջը.

—Կէկէլ ջան, բանս բուրդ է, Նոր-տար- ւայ համար ընկոյզ և միրգ չկարողացայ առնել:

—Վահ, մաշ էս տարի առանց գօզինազի ենք մնալու, հմի ես ինչ երեսով դուրս գամ ծիպլիան Նատոյի, չոփուս Կատոյի ու չո- լախ Սաթոյի առաջ, ասում է նեղացած Կէ- կէլը:

—Ի՞նչ կայ որ, կասե՞նք թէ Կաթողիկոսը նոր է մեռել՝ սուգ ենք պահում:

—Էրնակ էլաւ Կէկէլոյի չալտիկաչերին, էլի: Մինչև որ 3 տեսակ գօզինազ ու 6 տեսակ մուրաբայ չունենամ, ես տանը չեմ մնայ: Թագայ մօզնի վազիր եմ տուել, բաս չալտի վեր բերեմ, որ դուշմանը տրաքի՝ ասում է Կէկէլը և զրազ նստում:

Ուստայ խէջօն սկսում է մտածել և յան- կարծ վեր թռչելով գոռում է.

—Կէկէլ ջան, գտայ:

—Ի՞նչ էիր կորցրել, որ գտար:

—Էս 3 օրումը չենք կարող 40 մուկը բռնել:

—Ի՞... Ի... Ի կրեմ գլուխդ, մկներով պտիս գօզինազ էփթ, ասում է քմծիծաղ տալով Կէկէլը:

—Վահ, չե՞ս իմացիլ, որ Գորօցկոյ ու պրա- ւէն երկու մուկը 3 շայով առնում է: 40 մուկը որ բռնենք, էդ քեզ կանի 3 մանէթ, համ քու գօզինազը կըգայ համ իմ արազը:

զիչ տեսարանով. բայց երբ իրարից բաժ- նւեցին, ամեն մէկը ծածուկ կերպով բերա- նը մաքրեց ախտահանիչ թաշկանակով, սա- կայն այս ոչ ոք չնկատեց: Վերջապէս եկաւ և մեր խիստ ամօթխած, նամուսի գերի, անտիալկոնոլիստ թերասան Վրոյրը՝ հետը բերելով Պօլսից նոր եկած վագիմի կաթո- լիկ՝ իսկ այժմ Լուսաւորչի Գահին անդա- ւածան երկրպագող հօսոս և ազբային փոր- ծերին անշահասէր ներած ժողովարի, իս- կական կարմիր ականջ Ափիսողով աղա- յին: Մեծապատիւ մուրացկանների գալուս- տը մեծ իրարանցում պատճառեց հանդի- սականներին, էլ չգիտէին ինչպէս յարգել ու պատել այս անդին, թանկագին և չք- նաղ հիւրերին: Շիրվանը խիստ բախտա- ւոր, շփոթւած և մտացրիւ մի գատարկ Ֆինջան դրեց Ափիսողովի առջև, ասելով un caffee á la turgue, որի առիթով Ափի- սողով աղան ձեռքը քունքին դրած՝ merci mademoiselle ասեց: Այս իրարանցման մի- ջոցում դարձեալ ոչ ոք չնկատեց, որ մեր նամուսի գերի թերասան Վրոյրը ջէջի ա- րազի շիշը մինչև տակը դատարկեց ու ոլոր մոլոր քայլերով մտաւ տաք վառարանի ե- տեը, պառկեց քարածուխով լիքը արկղի վրայ ու սկսեց անձեռ-անուշ խրոմփալ՝ ան- տէր կստալ պէս: Ամենքը ներկայ էին, մը-

Բայց չէ որ հիմի գօրօզը փակ կըլինի: —Ինչ քնաս, մենք բռնե՞լք ինչպէ՞ս կէ- նի ան գլասնէքի տունը կըլինի: Մասում է ուստայ խէջօն և առաջ բերե- լով մկան 2 հատ կանաթներ, մէջն ամրաց- նում է իւր քսած հացի կտորներ ու ան- կիւններում դարսելով, կնոջ հետ մի կողմն է քաշում և կամաց ասում.

—Կէկէլ ջան, մէկը իմ բախտիցը լինի, իսկ միւսը՝ քու:

Մի քանի բոպէ սպասելուց յետոյ կանա- թը չըխկում է:

Կէկէլը մարդուց առաջ ընկնելով ուրա- խացած ասում է—էս իմ բախտն էր: Բայց մօտենալով կանաթին, կանգնում է տխուր և ասում.

—Վայ քոռանայ իմ բախտը, այ մարդ, հասիր:

Մարդը մօտենում և ի՞նչ տեսնում: Կա- տուն ցանկանալով իւզոտ հացն ուտել, զը- լուխը կոխել է կանաթի մէջը ու դէս ու դէն վազելով, վազեցնում է և երկաթի կանաթը:

Սէջօն շշկւած ասում է:

—Է՛հէ, այ հիմի արի էլը ցելիցը հանի:

—Ի՞նչ էլի ժամանակն է, դու կատուն կանաթից հանի, գոռում է կատաղած Կէ- կէլը:

Այդ ժամանակ կատուն վազելով դէպի Կէկէլը, սա էլ վախիցը ուզում է փախչել դիպչում է սեղանովը և վայր ձգում ու զին- շիշն ու մեղրի կճուճը և միջի գինինումեղ- րը թափում ուստայ խէջօի գլխին, որը այդ ժամանակ կուզէ կուզ մօտենում էր կատ- ւին բռնելու:

նում էր, որ նիստը բանային) ներս եկած ծառան մի ծրար տւեց Աղայեանին և ա- կանջին մի քիչ շըջիւղուց յետոյ դուրս գը- նաց:

Բժշկապետ Բ. Նուստարդեանը, իրեն միշ- այն յատուկ տեղ ու յաւիտենական նախա- գահ լինելու մուլութեամբ, նիստը բաց- ւած յայտարարեց: Թէև ամենքն էլ գի- տէին բժշկապետի քնքոյշ և կիրթ բնաւո- բութիւնը, բայց և այնպէս շատ զարմացան սովորական կամայականութիւնից, մանա- ւանդ կտարեց մի քիչ «Շունն ու կատու»-ի բանաստեղծ Օհանէսը, Ղազարն էլ միամիտ ձևանալով յայտնեց, որ նախագահելու մօ- տաւորապէս յարմարը թամաղա Օհանէսը կարող է լինել:

Այս արգէն կրակի վրայ նաւթ ածել էր նշանակում, որով Սև Սանդրօն բռնկեց:

—Ի՞նչ է այս, ասում էր Սև Սանդրօն, ինձ իրը թէ լուրջ գործի էք կանչում և յանկարծ նախագահ էք ընտրում «Շունն ու կատու» բանաստեղծին. նա կարող է միայն, այն էլ ամենաշատը, քելիխի թամաղա լի- նել, ուրիշ ոչինչ. իսկ ես քելիխ ասած բա- նը կհանքումս չեմ սիրել և չեմ սիրի եր- բէք: Մանաւանդ ժամանակ չունեմ դատարկ բաներով գրադելու, ժամը տասին հրաւիր- ւած եմ Հաւարարի կուրում արխտոկրատ

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՅՅՐԵԼԵՆԵԱԿՆ ԺՈՂՈՎ

Էլեքտրական լամպաներով ասատօրէն լուսաւորած դահլիճը լիւի-լիցուն էր ցան- կալի հիւրերով, որոնք փոքրիկ խումբեր կազմած՝ զրուցում էին մտերմաբար ոչ յօ- բեղանական հարցերի մասին: Սև Սանդր- օնն ու Աղայեանցը կողք կողքի նստած մասլահաթ էին անում և կակաօ խմում օր- ւայ հանդիսաւորութեան պատճառով: Շիր- վանն էլ իբր փորձառու հիւրընկալ, պա- րիզեան ժանեկիկներով զարգարուն ձեռնակ գողնոցով և գլխին էլ նոյնպէս ժանեկիկ- ներով գեղեցիկ չեփչիկ դրած՝ հիւրասիրում էր անդին հիւրերին՝ առաջարկելով պապի- բող, սիգատ, թէյ, սուրճ և ով ինչ ցան- կանում էր նրանով:

Յայտնւեց վերջապէս «մի խմիր, մի ծխիր» խիստ օգտակար բրօշուրների ակա- նաւոր հեղինակ պ. Արծրունին, որին ըն- դատաջելով Շիրվանը մեծ սիրալիութիւն արտայայտեց. ձեռքի ուժգին ու մտերիմ սեղումներ, սլջագուրանք, տաք-տաք պոռչ- տի, անկեղծ բարեկամական ժպիտներ: Բո- լորն էլ հիացիկ ու զարմացել էին այս յու-

—Վայ, հողեմ գլուխդ, այ մարդ, դու որ տղամարդ տեղովդ չես կարում մի կատու բռնել, 40 մուկը մնաց պէտք է բռնելիր:

Փարեմուգ

ԽՐԱՏ ՀԱՅՈՒՐԻՈՒՆ

Բան չգիտես իմաստունն սկսիր, Իմաստունը գիտցած բանը կը լրտար:

Քէ միտք ունէս երիտասարդ մեռնելու Արդ կարող ես ծերութիւնը ծաղրելու:

Արհամարհիր տխրութիւնը աշխարհի, Բայց մի խնդար երբ պատահես սգուրի:

Դէմքը այլոց անմտօրէն չձողղբես, Զլնի նայես հայելիին ամաչես:

Առաջ քան թէ կըզարթնես գազանին Նախ փորձելու պատրաստ արա քո ուղին:

Հաւերի հետ քուն մանելը սովորոյթ, Քէ որ արիր, ճրագէն քեզ ի՞նչ օգուտ:

Բազուկներում թէ ոյժ կզան դու չունես, Կուել հորթի հետ չմտնես ասպարէզ:

Ով չի կարող իր շոր գլուխը պահպանի, Ուրիշների, աշխարհի հոգսը թող չանի:

Վայելիր դու ժլատ մարդու վատ համբաւ, Բայց ոյժից վեր խօսում չանես դու քնաւ:

Դպրանիդ մէջ ստիք ոսկի չկուես, Քէ չէ, բերնեցդ կրակ կընկնես, կըգոհնես:

Քէ չես կարող զգալ ամօթ, կարմրել, Արա արհեստ քեզ համար միշտ սուտ խօսել:

Ար. Արեւիան

ԵՐԲ ԳԳԻՈՒՄ ԵՍ...

Երբ զգում ես...

Գուրգուրում ես խանութին, Երբ փարում ես, Համբուրում ես, իմ Անգին, Ախ թում է, որ Դու անտես, Խորտակում ես իմ հոգին:

Այն քո ծայնի, նորը ծեւերի Մերկացումը երջանիկ, Ինձ տանում է մի այլ աշխարհ, Մի ցուրտ աշխարհ գեղեցիկ, Ուր եւ սէրը ունի կարիք, Ունի չարիք—մի սեւ կիրք, Ուր մարում է, ուր մոնում է Հրապոյրը վատ հոգու, Ինչպէս շնչից խաւարում է Պարզ թափանցը ապակու:

Եւ երբ



Կ Ի Ս Ե Պ Ե Զ Տ Օ Ն Ե Կ Ե Ն

ՆՈՐ ՏԵՐԻՆՏ ԸՆԺՆՆԵՐ

1. Օրմանեան սրբազանին—յղկած քարը չի մամոտում:
2. Դուրեան պատրիարքին—կամքը դործի հոգին է. թուլ կամքի վերջը՝ մուրացկանութիւնն է:
3. Առաջնորդացու եպիսկոպոսներին—քար-

4. Կարապետ եպիս.—Հոգմբայից չէ՛ տղայ պի հետ վիճելը:
5. Բենիկ վարդապետին—Ինչպէ՛ս լինի մից, եթէ ուզում ես բարեպաշտ մնալ:
6. Գարեգին վարդապետին—հօրը համբուրեթեան պարտիզունն է աճում:
7. Երանդ նարիկին վարդ.—ով գինի, կին և երգ չի սիրում, իր կեանքում յիմար է մնում:
8. «Մշակին»—ամեն ոք իր սեփական քամին պիտի հոտոտէ:
9. «Տարագի» խմբագրին—արջը չըռնած՝ մորթին ծախում է:
10. Ապամուրարին—սովը ամենալաւ մարտոյութիւնն է:
11. «Լուսայի» խմբագրին—ով վէրքն ինքն է պատճառել, դժուար է բժշկուում:
12. Քալանթարին—անալի բանը մեռած հրայի մտի համ ունի:
13. Համբարձումին—սպիտակութիւնն էն դուր է կորցրել, որ սե է ծնել:
14. Սիրականին—ամառը մշտական չէ, պէտք է սեփական անկիւն:
15. Աղայնանցին—ճարպիկ լողացողները յաճախ են խեղդում:
16. Լիսիցեանին—պողից կարելի է իմանալ թէ աղէս է:
17. Խոնամնցին—ձիու կողքով գնալը չի նշանակում ձիով գնալ:
18. Կեօնճեանին—Կովին հազար անգամ էլ թամբես, ձի չի դառնայ էլի կընմանի:
19. Լէօյին—ներկած ծաղիկները հոտ չունին:
20. Շիրվանզադէին—ինչպէս աղան կըշալէ, այնպէս ծառան կըպարէ:
21. Թումանեան Յովհ.—վատ մարդ է այն մշակը, որ իր գործով չի պարապում:
22. Ղալայչի Մարգարին—աղբար, քանի դալայիտ:
23. Պարոն Գրիգորին—ամենի հետ վարուել մի արեւստ է, որ ոչ ոք չգիտէ:

Նունուփարովի հետ քեկուօկ պարելու...

—է՛յ, Սև Մանդրօ, ասեց զայրազանց Շիրվանը.—եթէ դուն կարծում ես...

—Ե՛ս ոչ թէ կարծում, այլ հաստատ գիտեմ, որ ինձ սե ասողներն ինձնից ասելի ճերմակերես չին:

«Դճըս, դճըս» գոռացին վրդոված բուրբը միաձայն. բայց ուշ էր արդէն, որովհետև Սև Մանդրօն շտապաբայլ իջնում էր սանդուղքից վրացերէն ուրախ երգելով.

ճցոնոց յոնջոց,
ցար Յցնի ճցցցլու.
ցոնը տցոնի ոցու,
տայ ցոնը ֆոթցլու.

—Դեհ, էդ էիր ուզում, բարեկամական կշտամբումով դիմեց Օհաննէսը Ղազարին, էդ էլ քու Սև Մանդրօն, ես ասում չէի վրէր...

—Ախպէր, ի՞նչ ասեմ, արդարանում էր Ղազարը, ոնց որ տեսնում ես, էդ իմ լաւ բարեկամ Սև Մանդրօն չի, մի ուրիշն է եկել նրա տեղ:

—Դուն այդ խօսքերը Թրիմեանի համար էլ ասացիր մի ժամանակ, պատասխանեց չեփչիկը բղովի գնելով Շիրվանը դժգոհած:

—Պարոններ, որոտաց զգաստացուցիչ ձայնով յաւիտենական ընդհանուր նախա-

զանը, որից խիստ վախեցած ժուռնալճի Ափիսողոմ աղան թողեց ջիղարա մը խմելու ու սկսեց մտովի «Տէր ամենակալ» մըրմընջալ,—ես ժողովը բացւած եմ յայտարարում:

Ահա, միայն այժմ նկատուեց, որ պ. Լէօն ներկայ չէր ժողովին. Շիրվանի կրօնքից գոհունակութեան թառանջ լաւեց զգալի կերպով, բայց նա վարպետօրէն խիստ ցաւարտայայտող դէմք չինեց: Ղազարը, լաւ հասկանալով Շիրվանի հոգու տանողաւոր, մեկնեց նոր ստացած ծրարը յաւիտենական ընդհանուր նախագահին և սա պատուելով ծրարը կարգաց հետեւեալը. «Սիրելի Ղազարոս! մեր Շիրվանը սովորոյթ է արել իր բոլոր յօդաձեւերում միշտ ինձ ակնարկել, որ մոթալ փափախով և տրեխներով սալոն չմանեմ, այս պատճառով ես ժողով չեմ գայ, որովհետև, ինչպէս քեզ լաւ յայտնի է, ես իմ մոթալ փափախից՝ մանաւանդ այս ձուն ձմեռ ժամանակ կարող եմ մըսել և հարբոխ ստանալ, և արեխներից ձեռք վերցնողը չեմ ու չեմ»:

—Էդ էլ քու Լէօն, հեղնելով ասեց Սև Մանդրօի նոր մկըտած քեղեխի թամաղա Օհաննէսը,—երևումս նա էլ քու լաւ բարեկամ Լէօն չի, մին ուրիշը գրած կըլի նրա տեղ:

—Բաւական է, պարոններ, նորից որոտաց յաւիտենական ընդհանուր նախագահը մի քիչ էլա քաշուեցէք ես մեր բարի սնաթին էկած Ափիսողոմ աղայից, ի՞նչ կարծիք կըկազմի մեր մասին, և այս ասելով դիմեց, ոչ իրեն յատուկ, վերին աստիճանի քաղաքավարութեամբ անգին հիւրին, որ նա խօսէ ըստ աւուր պատշաճի:

Ափիսողոմ աղան Պօլսում հէնց ծնած օրից վարժ էր հոռոտամիտ փաժագաջատեր արտասանելում, նամանաւանդ շատ էր կատարելագործել երիտասարդ հասակում Զիչեքչի և Քեմերալթի սալոններում: Նախագահի հրաւերով խորխուռւած՝ նորից ջիղարա մը խմելէն վերջը սկսեց.—

—Ու սա աչքային գոջարին լուսաշող յարգին տաք, ու ջաջանջափայլ նւիրագան ձիաձանին ագնախնդիր քոյներով ցողւած բազերուն միջև սրդիս խորանթոնթ ու սանթառամեղագան մթին խորշերուն մէջ ես սն զեռնձանչամ գՇիրվանդաթէ, անՇեամուս» քրեր է, ան «Բագլի համար» քրեր է, ու ես մեձ ուրախութեամբ ու աքահարար բիդի գարթամ ան Նամուսը, ան Բագլի համարը, զորս մեր հայազն զազանթաւոր վիրասանը

- 24. Գառար Կարատուզովին -- էտ սալը դեռ շատ մուրճեր կըջարդէ:
- 25. Հոգեւոր ատեաններին--նրանք օրացոյց են կազմում անցեալ տարւոյ համար, ձիերը կառքի ետեւից են լծած:
- 26. Տէրաէրներին--տէրտէրի ազահութիւնը և Աստու գթասրտութիւնը յաւիտենական լինի:
- 27. Կոյսերին--քաղցը երբը շատ թուշուններ է խարի:
- 28. Հայ նարուտներին -- հարստութիւնը արժւի թեւեր, իսկ նապաստակի սիրտ ունի:
- 29. Վանքի միաբանութեան--մկների արշաւանք:
- 30. Ներս. դպր. դրամարկին -- հարիւր հատ Проводник-ի ունիւնէ տուրակ:
- 31. Մերսոպ կպիս.--խաղաղութիւն ամենեցուն:
- 32. Բարգաս վարդ.--ձայնդ աւելի լաւ է լաւում:
- 33. Խորէն կպ. Մուրադէգ.--ոչ կարես երկու տիրոջ ծառայի:
- 34. Եզիշէ վ. Մուրադ. Խախկին վրդ.-- վայ իմ կորցրած փայլուն վեղար:
- 35. Եփրեմ կպս. Սուր.--վասն խաթրաջամութեան այսօր նրկեալ կամ:
- 36. Պետրոս Սիմոնեան--Նոյի տապանն ուր թողիր:
- 37. Կարսպ. Կոտանեանին--աշակերտներից քանիսը մարդ դարձան:
- 38. Սամսոն Յարութիւնեանին--բնութիւնդ է այդպէս, ծնունդդ, թէ ինքդ:
- 39. Սպէնդիարեան Յով.--քեզ ուզում են պատգամաւոր ընտրել, համաձայն էս:
- 40. Նպիսկոպ. Խարախանեանին -- ծանր կաց, լիտր գաս:



Լ Ա Ք Ա Բ Ա Լ Ա

—Պարոն Մօկինսկի, անտանելի զբոսիւն է, չգիտեմ, ինչ անեմ, իմ կինը շատ մտապկոտ է, շատ կարեւոր բաներ կասեմ կատարելու, բայց բոլորը կըմոռնայ. ես խօսեմ կարող ամբողջ օրը տանը նստել և նրան յիշեցնել:

—Է, Բեն-Բօն ապա, հէր օրհնած ինչու ես սրտնեղում, զրա դէմ էլ լաւ միջոց կայ. իմ կնոջ մտապկոտութեան դէմ ես միշտ այսպէս եմ վարուում. գրիւ մի թղթի վրայ քո բոլոր պատւէրները և կայցրու հայելուն, եթէ կինդ մոռնում է ամեն բան, չի մոռնայ հայելուն օրական 20 անգամ նայելու, այն ժամանակ կրկարդայ թղթի վրայ և կը կատարի քո բոլոր ասածները:

Փոքրիկ աղջիկը մտնելով ննջարանը նկատեց, որ իր 2 տարեկան եղբայրը դռան բանալին դրել է բերանը և վախեալուց սկսեց սոսները զարկել գետնին և կանչել մօրը. «մայրիկ շատ հասիր բանալին բերանից հանիր, շինի թէ բերանը կողպել:

Վարժապետը՝ Զարցրեց Յակովբին. «400 տարի առաջ այս օրս ի՞նչ գէպը պատահեցաւ»:

—Չգիտեմ, պ. վարժապետ, ես դեռ 10 տարեկան եմ՝ պատասխանեց Յակովբը:

Գ Ի Խ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ո Ր Տ Ը

Մի գիւղացի էշի վրայ նստած անցնում էր կամուրջից. յանկարծ մի գորտ կոկոսայ և էշը խրտնելով վայր գցեց գիւղացուն. գիւղացին բարկացած սկսեց յանդիմանել գորտին թքելով նրա կրծքին և սասց.

—Չես ամաչում, մարդկանց մօտ կոկոսում ես և ինձ էլ էշիցս վեր գցեցիր:

—Տօ մարդ Աստու այս ամբողջ գետը վրայիցս անցնում է ես չեմ ամաչում, հիմա քո մի քիչ թքովդ պիտի ամաչեմ, գժեկ ես ի՞նչ է. պատասխանում է գորտը:

Հաւաքեց յիշողութիւններից. Պարսկաստանցի խաթարալ— «Բեն-Ռօկի»

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ (սրօյնի)

Երեք տարի է Գանձակի զինարանատի տաճարը չի շինուում շինիլից չի կարողանալ փողերի կորչելուն: Որովհետեւ այդ փողերի կորչելուն մեղաւոր են նաև մեր «բնօթի» քաշող տէր հայրերը, որոնք թէ իրենց մեղքերը քաւելու և թէ փող գտնելու, որ թատրոնը շինւի, ցանկանում են իրենց քթերը «բնօթի» հանքի համար կապալով տալ...

Երոպայցիները առաջարկում են մինչև 20,000: Հայերից ցանկացողները աճրդին կարող են մասնակցել, որը կայանալու է Նոր-տարի օրը:

Պիօլի

Լ Չ Գ Ր Ը Յ Ի Ն Կ Ե Ը Ն Գ

Նորութիւններ Նոգետր ատեաններից

1. Արևը ծագեց, մայր մտաւ:
2. Թղթերի № գրեց ձև Բաղդասար միտրօպոլիտ:
3. Ատենակայները նստած սաօրագրում են:
4. Ատենակայիցը գրում է по заказу:
5. Գրագիրներն արտագրում են по приказанию:
6. Գործակալները տարածում՝ по желанию:
7. Իսկ գործերի կատարումն СССР ևն բարդ:



քերթեր է ու նոցանով հայի բանձալի անունը ընթ ձով և ընթ ցամաք համասփիւռ դարձաձաձ...

«Բառօ, կեցցէ» գոչեցին բոլորը հոտսական իմաստուից ճառին վերջ տայու համար, որից Շիրվանդադէն ամենեկին համ չառաւ շատ հասկանալի պատճառով, որովհետեւ նա մեր գրողներից ոչ հայ լեզու է սովորել, ոչ էլ ոճ, այլ սուսաց գրականութիւնը ամբողջովին կուլ է տուել Գէօթէ, Շիլլեր, Եկսպիտ, Շպիտգէն, Եկլինգ, Եոպենհաուէր և այլն:

Այս կարճատեւ ընդմիջումի ժամանակ Ափիսոզում աղան նորից ջիդարա մը լավել սկսեց ընդհատուած ճառի շարունակելուն պատրաստելով: Բայց յաւիտենական ընդհանուր նախագահն օգտելով հանգամանքից՝ խնդրեց Ղ. Աղայեանին, որ խօսէ:

—Ինչպէս գիտես, Սանդրօ ջան, սկսեց Աղայեանը, ես ամենեկին...

—Ես, Սանդրօ չեմ, ընդհատեց խիստ գժոճ Շիրվանը, քո Սանդրօն սև է:

—Իէ լաւ, շարունակեց Աղայեանը. էդքան էլ նեղանալ մի. ասեմք դուն էլ շատ սիպտակերես չես...

Հն, էն էի ասում, ինչպէս գիտես, ես ամենեկին դէմ չեմ յօքեկանիդ, ընդհակա-

ռակն՝ պատրաստ եմ երկու ձեռքով ստորագրել նոյն իսկ, մանաւանդ որ դու էլ ես գրում յօղածներդ, ի հարկէ մինչ յօքեկանիդ իրագործումը, որից յետոյ, ի՞նչ ասել կուզի, ուրիշ բայաթի շիրազ կերպոս, Բեռտօլիս կըմոռնաս: (Շիրվանդադէն՝ իբրև Նամուսի հարազատ հեղինակ, համեստօրէն մի քիչ կարմրում է). բայց որովհետեւ այսօր դուն ես մեր շրջանի միակ յերոսը, որ ինչպէս Ֆրանսիացին է ասում Շիրվան par-ci, Շիրվան par-la, comment trouvez-vous tout cela? (Համբարձումը բերանը բաց, մնացել էր զարմացած Աղայեանի Ֆրանսերէնը լսելով):—Ահա այս առիթով ես եմ խաղաղում եմ, որ քո կարծիքն աւելի կշիռ պէտք է ունենայ, քան թէ մէկ ուրիշինը:

Շիրվանը խիստ շփոթեց այս անպատելի առաջարկից և ուզեց մի լաւ, զորս դու պատելիցիր, ինչպէս մի ժամանակ Գր. Արծրունուն Արձագանքում, լւանալ, բայց ապագայ յօքեկանն աչքի առաջ ունենալով, կեղծ ժպիտ սահեցրեց գունաւոր շրթունքի վրայ ու ասեց.—


—Իմ կարծիքը,—պատասխանեց Նամուսի հեղինակը, այսինքն Շիրվանդադէն, ես փորձում ամ քնի աւելի լաւ կըլինի առաջ յօքեկանս գլուխ բերէք, յետոյ կարծիքս

հարցնէք, որ կըյայտնեմ հրապարակօրէն նայելով յօքեկանի տաճ արդիւնքին:

Հանդիսականները բան չհասկացան այս շատ պարզ ու հակիրճ պատասխանից. իսկ վաղմի բժշկապետ և այժմ միայն բժիշկ վ. Արծրունին հասկացող ձեւանալով հաստտեց համողիչ կերպով, որ իր վաղմի սրտակից բարեկամ monsieur Շիրվանը կատարեալ իրաւունք ունի, իսկ կասկածողները թող բարեհաճեն կարգալ իր. այսինքն ներկայ բժիշկ Արծրունու, դպրոցական առողջապահութիւն գիրքը, որի մէջ ապացուցւած է, որ կատարեալ առողջութեան համար անհրաժեշտ է մանկանումն և ծնրանումն մեր դպրոցական սաների համար, որից յետոյ նրանք լաւ կըգիտենան չորս ոտի վրայ ման գալ և երկու գաւակի վրայ նստել, որից ցաւակցաբար գուրկ են: Այս զգացած խօսքի առիթով Շիրվանդադէն լեզուն ծըլփացնում է իբր գոհունակութեան նշան:

Պատկեր յօքեկարի

Սիրամես



ԼԷՕ, ԱՂԱՅԵԱՆ, ՔՈՒՄԱՆԵԱՆ



—Զգոյ՛, զգոյ՛ փօտեմանք, թող ոչ որ շտեմէ, թէ մենք ինչ ենք անելու, մենք յաջողեցնենք է. ի. թողիկոս նրան ընտրելու, ով մեր ծուռակը կընկնի.

ՌԱՒԵՆԻՍՏ



Ամբեալ տարին Չապաւ. Գցենք նրան խոր անդրադարձ:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Յանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք, մենք խորհուրդ ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնարբերական լրագրին, որ դեկտեմբերի 1-ից հրատարակոււմ է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:

«ՍՈՒՀԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգինն է 10 ռ., կէս փարւանը 6 ռ. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և տալ հետեւեալ գներով.

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» և «ԽԱԹԱԲԱԼԱ» միասին
Տարեկան 10 ռ. © Երեք ամիսը 4 ռ. — կ.
Կէս տարին 7 ռ. © Ամիսը 1 ռ. 50 կ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакция „Сурандакъ“,
Հոռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ԷԼԵԿՏՐՈԲԱՐՇՈՒՄ

Մի պարուն տեսնելով որ էլեկտրաբարձում նստելու տեղ չկայ, սկսում է լինել հետի մասում կանգնել և վերցնում է հինգ կողեկանոց տոմսակ, հինգ րոպէի շափ կանգնելով յոգնում է, անցնելով նստողների շարքը տեսնում է, որ մի տիկին երեք կողեկանոց տոմսակ է վերցրել և նստած է. զայնպիսի ձայն է տալիս կօնզուկաւորին ասելով.

— Ասա խնդրեմ ինչպէս ուշադրութեամբ չէք հսկում:
— Այստեղ թէ՛ կայ հսկելու:
— Ինչպէս թէ՛ տես այս տիկինը վերցրել է երեք կողեկանոց տոմսակ, իսկ իմը հինգ կողեկանոց է: Որեմն ես պէտք է նստիմ, քանի որ իմ տոմսակը հինգ կողեկանոց է, իսկ այդ տիկինը պէտք է ետևի մասում կանգնի:
Խաղաղալիս

Третье издание

1-ой серии открытых писемъ

О. И. ШЛИНГА

„КАВКАЗСКІЕ ТИПЫ“

ВЫШЛО ИЗЪ ПЕЧАТИ

НА ДНЯХЪ

Выйdetъ Новая

Вторая серия

открытыхъ писемъ

Складъ изданія при художественной литографіи С. И. Быхова, Головинскій пр. 37.

Оптовымъ торговцамъ большая уступка

10—1

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ

Խաղաղ

Ա. Յ. Բ Ա Ղ Ե Ա Ն Ի

Սրանով յայտնում է յարգելի հասարակութեան, մանաւորապէս իր մշտական յանձնարարներին որ ստացած է

Ն Ք Ե Ղ Բ Ա Յ Ի Կ Ն Ե Բ

Նոր տարւայ և Ծննդեան տօներին յարմար **ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐԵՐ**
Ստացած է նորնպէս **ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐԵՐ**
Дворцовая № 2

50—3

ԲՈՂՈՐ ՏԵՍԱԿ ԱԳՐԱՆՔՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆՔ ԱՆՄԻՋԱԳԷՍ
ԱՐՑԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԵՒ ԽՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԺԱՐԱՆՆԵՐԻՅ

„ՕՒՐՆ ՄԱՐՇԷ“

Գ յ շ ա ն տ ե թ է յ ն ի ա պ ռ ա ն ք ն ե թ ի մ ա գ ա զ ի ն

Գալովինսկի պրոսպեկտ, Արեւոյի բաժանի դիմաց, տուն Ա. Ն. Ա. Ն. Ե. Ն. Ե.

Որպէսզի վերջին նորութիւնների սիրահար պատուելի հասարակութիւնը

Հ Ե Մ Ո Ջ Ի Ի

որ մեր մագալինում ապրանքները անհամեմատ ԱՐԺԱՆ են և աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ գնահատելի

*** քան մի ուրիշ տեղ ***

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՆՉԱՄԲ ՀԱՃԷՔ ԱՅՑԵԼԵԼ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԱԶԲՈՎ, ՏԵՄՆԵԼ

25—11

ԱԳՐԱՆՔԸ ԱՐԺԱՆ, ԳՆԵՐԸ ՎԵՐՋՆԵԿԱՆ

(Կ. Կ. 2.)

